ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Սարգիս Արմենի Արմենակյանի՝ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիան և նրա դերն ու նշանակությունը եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլյուցիոն զարգացման համար» վերտառությամբ ԺԲ 00.01 (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հռոմեացի իրավաբանները ստեղծել են հռոմեական իրավունքի գիտությունը. գիտություն, որի ուսումնասիրությունը հարյուրամյակների պատմություն ունի: Այն մարդկության պատմության մեջ առաջին իրավական գիտությունն էր աշխարհիկ իրավունքի վերացական նորմերով: Հռոմեացի իրավաբանների ժառանգությունը շարունակում է ակտիվորեն օգտագործվել ժամանակակից հասարակության մեջ: Ռեցեպցիայի միջոցով հռոմեական իրավունքն ինչպես միջնորդավորված, այնպես էլ անմիջականորեն ազդել և ազդում է օրենսդրության և իրավական գիտության զարգացման վրա: Դրա ազդեցությունը կարելի է տեսնել իրավունքի տարբեր ճյուղերում՝ քրեականից իրավունքից մինչև քաղաքացիական: Հռոմեական իրավունքի նշանակությունը, հիմնարար սկզբունքներն իրենց ամրագրում են գտել աշխարհի տարբեր իրավական համակարգերում:

Ուստի օրինաչափ է, որ ժամանակակից իրավաբանական միտքը դեռևս չի կորցրել իր գիտական հետաքրքրությունը հռոմեական իրավունքի նկատմամբ: Դա պայմանավորված է նաև եվրոպական մի շարք երկրներում սոցիալիստական հասարակարգից ազատ շուկայական հարաբերությունների անցումով: Խոսքը Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների մասին է: Այս համատեքստում արդիական են դառնում իրավունքում մասնավոր և հանրային սկզբունքների դերի և տեղի մասին պատկերացումները, որոնց հիմքերը դրվել են հռոմեական իրավունքում:

Հայաստանի Հանրապետությունում հռոմեական իրավունքի նշանակության գիտակցմանը ևս պետք է խթանել, ինչն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ մենք նույնպես, ինչպես նախկին ԽՍՀՄ երկրները, պլանային տնտեսական մեխանիզմներից անցում ենք կատարել ազատ շուկայական հարաբերությունների: Շուկայական հարաբերություններն անմիջականորեն կապված են հռոմեական իրավունքի հետ,

որտեղ կենտրոնական տեղ է գրավում սեփականության իրավունքի մասին ուսմունքը: Հռոմեական իրավունքի դրույթները հարստացրել են ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ոչ միայն սեփականության և այլ իրային իրավունքների, այլև պարտավորական և ժառանգական իրավահարաբերությունների կարգավորման տեսանկյունից:

Հռոմեական իրավունքի ուսումնասիրման արդիականությունը, սակայն, չի սահմանափակվում միայն շուկայական հարաբերությունների կարգավորման կիրառական նշանակությամբ: Իրավունքի տեսությունը հետազոտում է հռոմեական իրավունքի սկզբունքներն ու կառուցակարգերը՝ բացահայտելու և ընդհանրացնելու իրավական համակարգերի զարգացման օրինաչափությունները, ինչը թույլ է նրա կանխատեսելու իրավական համակարգում հռոմեական իրավունքի ինստիտուտների գործառնությունը:

Իրավագիտության համար առանձնահատուկ նշանակություն ունի հռոմեական իրավունքի ռեցեպցիայի խնդիրների ուսումնասիրությունը: Հռոմեական իրավունքի ռեցեպցիան իրավական երևույթ է, որը հանգեցրել է իրավունքի համաշխարհային չափանիշների ձևավորմանը և ժամանակակից իրավական տեսության ձևավորմանը:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք, մենք կարող ենք առանձնացրել, որ վերը նշված դիտանկյունից Սարգիս Արմենակյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ընտրված ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում:

Ատենախոսությունը հետապնդել է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի բովանդակության համալիր բացահայտման միջոցով գրական տեսական և կիրառական նշանակությունը եվրոպական իրավունքի և իրավագիտության տեսական և կիրառական նշանակությունը միջնադարյան եվրոպայում և հետագա ժամանակներում ներկայացնելու նպատակ: Այս նպատակի իրացման համար հեղինակի նողմից քննարկման առարկա են դարձել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հռոմեական իրավունքի ռեցեպցիայի էությունն ու նշանակությունն իրավունքի և իրավագիտության զարգացման խնդրում բացահայտելը, հռոմեական իրավունքի ազդեցության հիմնական ուղղությունները և սահմանները եվրոպական ընդհանուր իրավունքի բովանդակության և հայեցակարգային մոտեցումների վրա բնութագրելը, հռոմեական իրավունքի արդիական նշանակությունն իրավունքի և իրավագիտության հետագա զարգացման խնդրում:

Հեղինակի գիտական ձեռքբերումներից կարելի է համարել այն, որ մայրցամաքային ընդհանուր իրավունքի ձևավորման տեսանկյունից հռոմեական իրավունքի ռեցեպցիայի հետ կապված հիմնախնդիրները դիտարկվել են ավանդական և արդի մոտեցումների համատեքստում՝ որպես մեթոդաբանական ուղի, որի միջոցով փորձ է արվել բացահայտել հռոմեական իրավունքի գիտության արդիականության և դրա ընկալման նոր առումները:

Ատենախոսության հիմքում դրված են մայրենի լեզվով և հատկապես՝ օտարալեզու մասնագիտական աղբյուրներ, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավել համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումներին, առանձնացնելու առավել հիմնավորված մոտեցումները և դրանց համակողմանի վերլուծության արդյունքներով առաջադրել համարժեք եզրահանգումներ: Ատենախոսությունը ծավալային և ձևավորման տեսանկյունից կազմված է սահմանված չափանիշներին համապատասխան:

Ատենախոսությունը գրված է ընդունելի գիտական ու հստակ լեզվաոճով, այլ հեղինակների կարծիքներին անդրադարձը ևս համապատասխանում է ընդունված չափանիշներին: Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և նյութերից օգտվելու համարժեք ընդունակություններ:

Միաժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այս հետազոտությունը նույնպես զերծ չէ թերություններից, որոնք, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին.

1. Հետազոտողն ատենախոսության մեջ առաջադրել է հետևյալ խնդիրները՝ *բացահայտել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի էությունն ու նշանակությունն իրավունքի և իրավագիտության զարգացման խնդրում, բնութագրել հռոմեական իրավունքի ազդեցության հիմնական ուղղությունները և սահմանները եվրոպական ընդհանուր իրավունքի բովանդակության և հայեցակարգային մոտեցումների վրա, հետազոտել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի առանձնահատկությունները միջնադարյան Եվրոպայի պատմական զարգացման տարբեր փուլերում, միջնադարի (XI-XIII դարեր), Վերածննդի, հումանիզմի, Ռեֆորմացիայի, Լուսավորության, Նոր և Նորագույն ժամանակաշրջաններում, ներկայացնել հռոմեական իրավունքի արդիական նշանակությունն իրավունքի և իրավագիտության հետագա զարգացման խնդրում:*

Այնուհետև, ըստ առաջադրված խնդիրների՝ ատենախոսության առաջին գլխի 1.1 պարագրաֆը նվիրել է Եվրոպական ընդհանուր իրավունքի վերլուծության մեթոդաբանական

և իրավական նախադրյալներին, որի շրջանակներում անդրադարձ է կատարել նաև «իրավունքի համակարգ», «իրավական համակարգ» և «իրավապաշտպան համակարգ» կատեգորիաներին: Մեր կարծիքով, այդ կատեգորիաներն ատենախոսության մեջ անհարկի են դիտարկվել, քանի որ, նախ, անդրադարձը եղել է նկարագրական բնույթի, և երկրորդ՝ դրանց անդրադարձը բնավ չէր կարող լուծել ատենախոսի կողմից առաջ քաշված խնդիրները: Այլ խոսքով՝ հեղինակը պետք է պահպաներ գիտական հետազոտության իրականացման կանոնները և 1-ին գլխի 1.1 պարագրաֆում սահմանափակվեր միայն մեթոդաբանական և իրավական նախադրյալներին վերաբերող հարցադրումներով:

2. Բացառությամբ ատենախոսության երկրորդ գլխի 2.4. պարագրաֆի, որը նվիրվել է ազգային իրավունքի կատարելագործման խնդրում հռոմեական իրավունքի և իրավագիտության ժամանակակից նշանակությանը և դերին, որում անդրադարձ է կատարվել նաև այն հարցադրմանը, թե հռոմեական իրավունքն ինչ ազդեցություն է ունեցել հայրենական քաղաքացիական օրենսդրության վրա, մյուս պարագրաֆները խիստ պատմական են: Ըստ հետազոտության օբյեկտի առարկայի, առաջադրված խնդիրների և նպատակի արդարացված կլիներ, եթե փորձ արվեր առավել թիրախային ցույց տալ հռոմեական իրավունքի ազդեցությունը, դերն ու նշանակությունն իրավունքի և իրավագիտության կատեգորիալ ապարատի ձևավորման և զարգացման գործում: Այլ խոսքով՝ հետազոտությունն առավել կշահեր, եթե հետազոտության նպատակը կենսագործվեր առանձին իրավական ինստիտուտների համատեքստում:

3. Ատենախոսը որպես պաշտպանության ենթակա դրույթ է ներկայացրել այն, որ. *«Աշխարհներում հսկայորեն առանձնացվել են ռեցեպցիայի հետևյալ եղանակները՝ կամովին ռեցեպցիա և ռեցեպցիայի ոչ կամովին տեսակները [...]» (մեջբերման ավարտ)*:

Այս տեսանկյունից, սակայն, պետք է արձանագրել, որ ռեցեպցիայի կամովին և ոչ կամովին տեսակների մասին ավելի վաղ խոսել է Ս.Վ. Տկաչենկոն[1]. Ատենախոսը, այնուհետև, շարունակելով դրույթը, գրել է. *«Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռեցեպցիայի կամովին եղանակը, որը հատուկ նշանակություն ունի հռոմեական իրավունքի ներգործության*

---

[1] Տե՛ս **Ткаченко С.В.**, Рецепция римского права: вопросы теории и истории: дисс. канд. юрид. наук. Москва, 2006, ст. 8:

պարհաների, կառուցակարգի ու արդյունքների բացահայտման համար: Ռեցեպցիան ի հայտ է գալիս սովորաբար պետահիրավական ինստիտուտների ճգնաժամերի ժամանակ ու կայանում է օտարերկրյա իրավունքի իրավական նորմերի, ինստիտուտների կամովին օգտագործման մեջ՝ գաղափարական, սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով» (մնջքերման ավարտ): Այս առումով պարզ չէ, թե այդ դեպքում ինչում է դրսևորվում ատենախոսի կողմից առաջ քաշվող դրույթի նորույթը՝ ի համեմատություն մինչև այդ իրավաբանական դոկտրինում քննարկվածի:

Վերոնշված դիտողությունները, այնուամենայնիվ, չեն արժեզրկում ատենախոսության գիտական արժանիքը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սարգիս Արմենի Արմենակյանի՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացրած «Հռոմեական իրավունքի ռեցեպցիան և նրա դերն ու նշանակությունը եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլուցիոն զարգացման համար» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշման պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու — Կ.Ս. ԱՄԻՐՅԱՆ

ԵՊՀ գիտական քարտուղար — Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20 նոյեմբերի, 2023թ.